Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Մ. Տ. ՇԻՈՏ

ՔԻԻՐՏ ՊԷԿ

(ԳԾԵՐ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ)

Երկրորդ տպագրութիւն

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԴԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
1904.

891.99
Ա-83

891.99
Ա-83
Ամ.

01 JAN 2009
19 NOV 2010

Մ. Տ. ՇԻՈՏ

ՔԻԻՐՏ ՊԷԿ

(ԳԾԵՐ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ)

Երկրորդ Տպագրութիւն

1001
3137

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Армянская Библиотека
7/XI 1922
Ա. ՍՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
1904.

2009 MAI 2 1 02. 2013

21496

Дозвол. ценз. С.-Петербургъ, 29 Іюля 1904 г.

"Пушкинская Скоропечатня", Лештуковъ, 4.

Ա Զ Դ.

Տեսնելով որ ամենակարճ ժամանակամիջոցում սպառուեց «Քիւրտ Պէկի» Ա. հատորիկը և զանազան տեղերից պահանջւում է մեծկակ քանակութեամբ՝ ահա լոյս եմ ձգում նրան երկրորդ տպագրութեամբ։

Ընդ դմին հարկ եմ համարում յայտնել «Քիւրտ Պէկի» յարգելի բաժանորդներին, որ թէև այդ գրքի Բ. հատորը հրատարակելուց անմիջապէս յետոյ տպագրութեան էի յանձնել Գ. հատորը, սակայն դա մինչև այսօր լոյս չի տեսաւ ինձմէն անկախ պատճառներով։ Այժմ հաճութեամբ կը հաղորդեմ, որ վերջ ի վերջոյ կարելի եղաւ յաղթել բաղմադիմի խոչընդոտներին և շուտով բաժանորդներին կուղարկուի յիշեալ գիրքը։

Իսկ Դ. Ե. Զ. և մնացեալ հատորներ պատրաստ են արդէն տպագրութեան համար և

Ռուսով եմ, որ ինձ պիտի յաջողի հետզհետէ լոյս ձգել նրանց և տալ բաւարարութիւն բաժանորդների արդարացի պահանջներին։

Բաժանորդագրութիւնը շարունակւում է մինչև Զ. հատորի լոյս տեսնելը, որից յետոյ կը փակւի բաժանորդագրութիւնը և գրքերը կուղարկւին ցանկացողներին՝ վրան նշանակուած գներով։

Մեր բաժանորդները ձրիաբար կստանան մի-մի օրինակ «Մերձեցում» ու «Սև հարսանիք»։

Պայմանների մասին դիմել հետևեալ պարզ հասցէով.—Анапа, Шводъ.

19 7/x 03

Անապա. Շ.

ՔԻԻՐՏ ՊԷԿ

ԳԾԵՐ ՀԱՅ-ԲՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ

I.

Այժմեան Բալու քաղաքը՝ (Տաճկահայաստան, Տիգրանակերտի նահանգ) հին Հայաստանի Զորրորդ Հայք կամ Ծոփայ Աշխարհ նահանգի Բալահովիտ գաւառի գլխաւոր քաղաքն էր։

Նայելով աւանդութիւններին և ժամանակակից ժերունիների պատմածին՝ Բալու գաւառը ԺԹ դարի սկզբներին ունէր 253 գիւղ, որոնցից 120ը զուտ հայաբնակ էին։ Մնացեալ 133 գիւղերում կը

բնակէին հայ և քիւրտ խառն։ Այդ 253 գիւղերում բնակւող հայերի ընդհանրութիւն էր՝ Բալու քաղաքի հայ բնակիչների հետ 60—70 հազար։ Իսկ քրդերինը՝ մօտ 30 հազար հոգի։

Այժմ այդ գիւղերէն գոյութիւն ունին միայն 248 գիւղեր, որոնցմէ 200-ը քրդաբնակ են՝ անխառն, և միայն 48-ը հայաբնակ։ Նոյն իսկ այդ 48 գիւղերէն մի քանիսը[1] հայ և քիւրտ խառն կը բնակին։

Այդ գաւառում այժմեան հայերի թիւն է ընդ ամենը հազիւ 17—18 հազար. մինչդեռ քրդերի թիւը 60—65 հազարի կը յանգի...։

Հայ ազգաբնակութեան թւի այդ խոշորկէկ սահմանափակումը յատուկ չէ, ի

[1] Ինչպէս՝ Թիլ, Թռխէ, Նաճարան, Քուրտը քան գիւղերը Աշմուշատի նահիէում (գիւղախումբ) և Նոր-Շնակ, Նոր-Գեղ, Քէնկէռլի, Ուղուն-Օվի-Մեղրէ են գիւղերը Բալուի հիւսիս-արեւմըտեան կողմը։

հարկէ, միայն Բալու գաւառին։ Այլ, եթէ չասեմ ամբողջ Տաճկաստանին, գէթ Քիւրտիստան կոչուող դժոխքին կարող եմ ասել։

Ի՞նչ եղան այդ հայերը?

Ահա մի ուշագրաւ հարց, որ կը ծագի ընթերցողի ուղեղում, և որին կաշխատիմ հարևանցի պատասխանել ներկայ և նոյն խորագիրը կրող յաջորդ հատորիկներով։

Որպէս օրինակ՝ այս գործի մէջ՝ վեր կ'առնեմ Բալուի մի անկիւնը։

II.

Այժմեան 10 տնւոր Ղամիշլուք (Եղէգնուտ) հայաբնակ գիւղը, որ կիյնայ Բալու քաղաքի հիւսիսային կողմը, մօտ 30 վերստ հեռաւորութեան վրայ, մի ժամանակ կը պարունակէր իր մէջ 140 տուն հայ։

Թէև այդ գիւղում գոյութիւն չունէր ոչ դպրոց և ոչ էլ եկեղեցի, բայց Ղամիշլուքցին իրան բաղդաւոր կը համարէր

նրանով, որ իր մշակած բարելից երկիրը իր սեփականութիւնն էր (իբր թէ), որ ինքը մարապանների նման չաշխատիր՝ աղաների շտեմարանները լեցնելու, բայց իր ընտանիքը քաղցած պահելու պայմանների մէջ։

Ղամիշլուքի մօտիկ գտնուող Փուրմ և Մաղարա (այր) գիւղերի արիւնարբու եւ ծրիակեր քրդերը, ի հարկէ, երբեմն—երբեմն ցոյց կը տային Ղամիշլուքցուն իրանց նիզակների մահաբեր ծայրերը, կը պահանջէին Ղամիշլուքցու ճակատի քրտանց արդիւնքը։ Պահանջածները կրստանային։ Եւ այդպէս կողոպտելուց յետոյ դեռ, լրբաբար, գաղանային կրքերն էլ կը յագեցնէին, եթէ մի գեղեցկուհի տեսնէին Ղամիշլուքցու տանը։

Բայց այդ «ոչի՞նչ»...

Չէ՞ որ «նրանք քիւրտ են. նրանց համար հալալ է մեր մալն էլ, մեր կնիկն էլ, մեր արիւնն էլ.... Միայն թէ՝ մեր լոյս հաւատին չի դպչին ու մեր հայութիւնը մեզնէ չիխլեն.... Մենք ժրաջան մարդիկ ենք.... Մենք դարձեալ մալի և կնոջ տէր կը դառնանք... իսկ քիւրտը էլի չունի և էլի մեզ պիտի կարօտի.. Մենք հայերս, որ կանք, ոչխար ենք, քրդերը — գայլ. որքան էլ ոչխարը գայլի-գազանի փայ լինի, որքա՞ն էլ նրան մորթես-ուտես — նա չիվերջանար և օրըստօրէ կ'աճի։ Մինչդեռ գայլը տեսէք. — թիւը նւազ, փորը միշտ քաղցած...»։

Այդպէս կը դատէր՝ իր պատիւն ու ազնիւ զգացմունքներն հացին հետ կերած Ղամիշլուքցի սարուկ հայը։ Եւ չիկար նրանց մէջ քաղաքացիական վսեմ համարձակութեան տէր մէկը, որ բանար Ղամիշլուքցու միտքն ու աչքը։ Որպէս զի Ղամիշլուքցին տեսնէր ու զգար իր կեանքի այլանդակ դէմքը։ Եւ այնուհետև մի բոպէ մտածէր մարդավայել կեանքի վրայ։

Առ հասարակ Տաճկա-Հայաստանի յետ

ընկած այդ կողմերում հայը ոչխարացած էր, թէ համոզմունքով և թէ բոլոր էութեամբ։

Ղամիշլուքի մէջ մի զերդաստան աչքի կիյնար իր բազմամարդութեամբ և «բարեկեցիկ» վիճակով։ — Վարդանեան զերդաստանը, որ բաղկացած էր 60—70 հոգուց և «շատ մալի տէր էր»։[1]

Վարդանեան զերդաստանի նահապետը, կամ ինչպէս այդ կողմերը կ'անուանեն բազմամարդ և ազդեցիկ զերդաստանների տարիքաւոր պետ-տղամարդոցը, — մելիքը՝ մօտ 100 տարեկան մի զառամեալ ծերունի էր։ Նորան կը կոչէին Վէրտան-Զատէ Մելիքխաս։

Թէ Ղամիշլուքցիք, թէ դրան մօտիկ

1) Զակերտի մէջ առնուած այն բառերը, դարձուածքները են, որոնց որ տեղէն առնելս չեմ յիշած՝ պէտք է գիտենալ, որ այդպիսիները քաղել եմ աւանդութիւններէն, ականատեսների պատմածէն, կամ ընդհանուրի կարծիքէն ու համոզմունքէն։

գտնուող Արդիխանցիք և թէ բոլոր շրջակայքի հայ գիւղացիք,—ամենքը պատկառանքով կը դիմէին նորա խելացի և անժխտելի խորհուրդներին։ Մանաւանդ Ղամիշլուքում նա այնքան մեծ հեղինակութիւն ունէր, որ առանց նրա հաճութիւնն ստանալու Ղամիշլուքցին չէր կարող որ և է բան անել, թէկուզ իր որդին ամուսնացնել, կամ մի եզ գնել...

Շատ բանի վրայ կը մտածէր Մելիքխաս, բացի այն ազգային նուիրական հաստատութիւններէն, որ կը կոչուին Եկեղեցի և Դպրոց, կամ Դպրոց և Եկեղեցի։ Իսկ եթէ եղել են կողմնակի անձինք, որոնք առիթը ներկայանալիս յիշեցրել են ծերունուն դրանց մասին՝ ստացել են մօտաւորապէս հետևեալ պատասխանը.

— Տղաքս, գիտէ՞ք որ այստեղ Քիւրտիստան է և շատ էլ հաշիւ չունինք մեր քէյֆի ուղածին պէս շարժուելու։ Այսօր ծեռնարկեցիք եկեղեցու կամ դպրոցի շինութեան, վաղը պիտի տեսնէք, որ ձեր

ձգած հիմքերին հետ մեր բոլոր բնակարան-
ները հողին հետ պիտի հաւասարեցնեն։

— Ովքե՞ր։

— Օսմանցուն կամ Քիւրտը։ Այդ բա-
ների մասին պիտի մտածէին մեր պա-
պերը—կ'աւելացներ Մելիքը—որ մենք
այսօր պատրաստ ունենայինք, ժամանա-
կակից անհաւատներն էլ ընտելացած լի-
նէին և հաշտ աչքով նայէին այդ հաստա-
տութիւններին վրայ։ Բայց մեր պապերը
չ'արին այդ բանը։ Եթէ յանկարծ, մենք
փորձենք այսօր առնել մի այդպիսի քայլ,—
դա կը լինի մի ուշադրաւ Նորութիւն
և մեր հակառակորդները պիտի ընդունին
այդ, որպէս մուսդաշուղ (ըմբոստ) քայլ...։
Շատ թանկ կը նստի այդ բանը մեր վրայ,
և շատ հաւանական է, որ դրա փոխարէն
մենք առժենք մեր ազգութիւնը և մեր
վայելած շատ թէ քիչ վստահութիւնը։

— Բայց ինչ մուստաշուղ բան կայ
դրանց մէջ որ...

— Ցղաքս, մեր թշնամիները կոշտ-կո-

պիտ, անհասկացող մարդիկ են. էլ դու
բան-գործ չունիս, արի՛ և դրանց հասկա-
ցուր, որ դպրոցն ու եկեղեցին մի ժողո-
վրդի ոտք ու գլուխն են, որ առանց դրանց
մի ազգ չիկարող գոյութիւն պահպանել և
այլն։ Բայց մեր թշնամիները լսել անգամ
չեն ցանկար քու առարկութիւններդ։ Նա-
յինք՝ նրանք կուզե՞ն մեր գոյութիւնը։
Հապի՞ւ թէ...

— Ուրեմն...

— Ուրե՞մն գնացէք տեղերդ և վերջա-
կէտ դրէք այդ խնդրին առջև։

Եւ անյեղաշրջելիէր Մելիքխաստիմիրը...

Թէև նորա խօսքերի մէջ կային դառն
ճշմարտութիւններ. այլ սակայն ոչ բոլո-
րովին։ Գոնէ այդ ծերունին և նմանները
չէին ուզեր ըմբռնել այս տարրական իրո-
ղութիւնը, որ առանց զոհողութեան
գլուխ չիգար և ոչ մի գեղեցիկ
գործ։ Նոյնպէս և այն, թէ ակնարկած
սխալները փաթաթելով անցած-գնացած սե-
բունդների (պապերի) վրայ՝ անշարժ

մնալը նոյնպէս սխալանք-յանցանք կը լինէր։

Զէ՞ որ մի օր իրենք էլ անցած-գնացած պապեր պիտի դառնային։ Եւ ինչ որ այսօր իրենք կը վերագրէին իրենց պապերին՝ նոյնը պիտի անէին, ասել կուզեմ՝ կարող էին անել, հետագայ սերունդները իրենց նկատմամբ։

Այո, ծերունու և նմանների անհասկացողութիւնն ասենք, թէ անքաղաքակիրթութիւնն էր պատճառը, որ այսօր նորանց թոռները դարձել են մի-մի արիւնկզակ ենիչէրի և դրա հետ միասին անդիտակցաբար գործիք են դարձել Օսմանեան տմարդի պետութեան ձեռքին, ի վնաս և յայլասերումն տարաբաղդ Թուրքահայերի։

Երէկուան հայը այսօր քիւրտ դարձած՝ հայ-արիւն կը խմէ!...

III.

Ինչպէս այժմ, նոյնպէս և հնումը քրիստոնեայ մարդուն համար գեղեցիկ ծնելը կամ գեղեցկի ծնող լինելը պատիժ-պատուհաս էր Թիւրքիայում կամ Քիւրտիստանում։

Այն՝ ինչ որ գեղեցիկ, փայլուն, վայելուչ արտաքին տեսք ունի։ Այն՝ ինչ որ պիտանացուների մէջ աչքի ընկնող է կամ լաւ արժէք ունի։—Այդ ամենը Ալլահը ստեղծել է միայն և միայն Իսլամի որդւոց համար։

Պիղծ կեաւուրը, եթէ Խալիֆի երկրում իր դարշելի գլուխը ուսերին վրայ ողջ պահելու մեծ շնորհին արժանի է սեպուած, էլ ի՞նչ կ'ուզէ աւելին։

Թող անհաւատ կեաւուրը աքնի գիշերցերեկ. թող արիւն-քրտինք թափէ. նորա աշխատութեան բոլոր պտուղներէն լաւագոյնը,—լինի դա անասուն, տունտեղ, մալ-միւլք, զաւակներ են,—պիտի յանձնէ իր ամբողջ էութեան տիրոջը, Իսլամի զաւակին։

Մուհամէտի ընդգծած (զուրանի վար-

դապետութեան) շաւղով ընթացողների երկրում այդպէս էր «օրէնքը», այդպէս է և այդպէս էլ պիտի լինի։ Քանի դեռ համը ենթակաները կը շարունակեն ընթանալ իրենց պապերի գնացած ճամբով և քանի դեռ Լուսաւորութեան ու Մարդկային Իրաւունքների բարձր հովանաւորողի գեղեցիկ անունով պարծեցող էֆէնտիները կը շարունակեն ամեն սրբութիւն զոհել իրենց ողորմելի «ես«-ին, իրենց շահին...

Կը կրկնեմ, որ քրիստոնեայ մարդոց համար մեծ դժբաղդութիւն է Թիւրքիայում գեղեցիկ զաւակ ունենալը։ Մանաւանդ Բալուի նման խուլ անկիւններում, ուր բարբարոսութեան զոհերի լացն ու հառաչը, ճիչն ու աղաղակը ժեռ-քարերի մէջ անլսելի կը մնան։

Այդպիսի դժբաղդների թւումն էր և Մելիքխատոն, որի չորս որդիքներէն ամենամեծը՝ Մարտոն՝ մի գեղեցիկ աղջիկ ունէր։

Գեղեցիկ Թուրվանտան - այդպէս էր Մարտոյի աղջկան անունը-արդէն թեւակոխած լինելով իր կեանքի 15-րորդ գարունը՝ դրաւել էր Քուրմ գիւղի ցեղապետ Փափազ-օղլի Սլի աղայի[1] ուշադրութիւնը։ Սլի աղան մի օր յայտնեց Մարտոյին, երբ դեռ Թուրվանտան 11 տարեկան հասակումն էր, որ բաղդաւոր է Վարդանեան գերդաստանը և մասնաւորապէս Մարտոն, որ իր պէս ապագայ փեսացու ունի, որը կարող էր ամբողջ գերդաստանի, և նոյն իսկ ամբողջ Ղամիշլուք գիւղի, մշանշենական երջանկութեանը պատճառ դառնալ...

Եւ այդ յայտնեց նա անծամբ, առանց կողմնակի միջնորդի, առանց երկար-բարակ ծեսականութիւնների տեղիք տալու։ Ի՞նչ

1. Բալուի կողմերը, առ հասարակ, իւրաքանչիւր բրդաբնակ գիւղի ժողովուրդ մի «ցեղ» կազմէ և այդ գիւղի աղդեցիկ «աղան»—դրան ցեղապետը։ Մէն մի ցեղ իր գիւղի անունով կը կոչուի. այսպէս օր. Քուրմի ցեղը—Քրմրցի, Վարդինիկի ցեղը—Վարդինկրցի են։

7/31 1922

հարկ կար դրան որ։ Քանի որ կարելի էր անձամբ ներկայանալ և ամեն ինչ յայտնել։

Այդ տեղ ի՞նչ մի առանձին անսովոր բան կար։ Զէ՞ որ օր-ցերեկով հազար անդամ կատարուած բաներէն մէկն էլ այդ էր...։

«Քիւրար պէտք է միամիտ ու պարզ մարդ լինի և պարզ ու միամիտ էլ բան անէ, որ համը ելնէ։ Քիւրային չիվայլեր իյնալ ձևականութիւնների ետևէ»։ Այդպէս էր ասել նշանաւոր Սէյիտ-պաշի[1] Տուռսունը և այդպէս էլ պէտք է լինի, կը մտածէր Ալի աղան։

Այն օրուանէ, երբ Մելիքխտոն ու Մարտոն իմացան այդ բանը, նրանց աչքին առջև պարզ երևցաւ իրենց դրութեան աննախանձելիութիւնը։ Եւ ի հարկէ, սկսեցին անհանգստանալ ու... մտածել։ Բայց, ըստ Մելիքխտոյի, ոչինչ չէր կարելի անել։

— Մեր պապերը մի անգամ սովորեցրել են, — կ'ասէր նա, — մենք չենք կարող այժմ ընդդէմ գնալ այդ, ըստ քրդաց, սրբագործուած սովորութեան։ Այդ միևնոյն կը լինէր, եթէ Արածանի գետին ասէինք, որ «Բալու քաղաքին առջևէն մի՛ անցնի. հապա բարձրացի՛ր Մեսրովբեան բերդին վրայ և անկից թափիր ցած»։ Կամ եթէ արևին ասէինք, թէ «Արև՝ մեր արտերը սարի հիւսիսային ստորոտումն են. ուրեմն ընթացքդ փոխէ և հիւսիսային կողմէն ժուռ եկուր...»։ Եթէ կը հաւատաս, թէ Արածանին կամ արևը իրենց ընթացքին հակառակ կարող են գնալ։ Ապա հաւատա այդ դէպքում, որ մենք կը յաջողինք ո՛ր և է կերպով փոփոխել քրդերի օրէնք դարձրած սովորութիւնը։ Հետևա-

1. Սէյիտ-պաշի — Քիւրտ հոգևորականների գլխաւորը, որ իր ժողովուրդը կը հովուէ անգիր բանաստեղծութիւններ երգելով և սազի վրայ ածելով։ Նրանցից մին էլ վերև յիշած Տուռսունն էր, որ կը բարոզէր քրդերին մէջ։ «Սիրել պարզութիւնը և գաղանաբարոյութիւնը».—ահա նրա քարոզների հոգին։

բար աղատել Թուրվանտան Ալիի ձեռքէն՝ չենք կարող։

Եւ, դժբաղդաբար, պէտք է ասեմ, որ բոլոր բալուցի հայոց համոզմունքն էր այդ։ Նոյն իսկ այժմ, երբ հեռաւոր և մօտիկ անցեալի անվերջ փորձերն ապացուցել են իրենց կարծիքի բոլորովին հակառակը՝ բալուցի մեր եղբայրներէն շատերը դեռ նոյն համոզմանն են։

IV

Բայց այդքանը բաւական չէր։

Վարդանեան դերդաստանի և բոլոր Ղամիշլուքցիների անբաղդութիւնը լրացնելու համար՝ վրայ հասաւ մեծ փոթորիկը։

Թէ ի՞նչ էր այդ։

Ղամիշլուքի արևմտա-հիւսիսային կողմը կիլնան Գարա-Զոր կոչուող գիւղախմբի մոտ 50-60 կտոր գիւղերը, ի միջի այլոց

և՝ Դօղրք, Տաշվէրէն, Զէլէպի, Սուլթան-Պաղ, Գավա, Պէսդեանք (Պէսթէք), Արամիճան[1], Քար-Օր են գիւղերը։ Որոնց մէջ բնակուող քիւրտերը, իսկ որ, մի-մի ժամանակակից Լանկ-Թիմուրներ, Եզիտներ են, և որոնք կարծես, երդուել են երկիրը դատարկել հայոցմէ։ Այդ բարբարոսական գործողութիւնը կը կատարուի այսօր Օսմանեան Պետութեան ծրագրած որոշ սիստեմով, «փոլիթիքալի ֆանտերով»...

Մի և նոյն բանը հնուամբ կը կատարէր լոկ ընչասիրական տենչով.

Այն ատեն քիւրտ տարրը մի նպատակ միայն ունէր. յափշտակել այն ամենը, ինչ որ իր հայրենակից հայինն է։

Այլ ևս նրա ինչի՞ն էր պէտք. որ դրանով անդիտակցաբար կը նպաստէր մի այլ զարհուրելի նպատակի իրագործման, որը

---

1. Արամի ճան գիւղը այժմ հայաբնակ է։

ապագային Օսմ. Պետութեան մտածմունքի առարկան պիտի դառնար...

Այդ այդպէս։ Սխալ կը լիներ կարծել, թէ այսօրուան ամենամոլեռանդ բարբարոս քիւրտը՝ բաց ի գոյութեան կռուում չընկճելու ճիգերէն՝ ունի որև է ուրիշ նպատակ։ Որովհետև աւարառութիւնը, մարդասպանութիւնը և գերեվաճառութիւնը կը կազմէին և կը կազմեն կէս-թափառաշրջիկ-խաշնարած քրդերի արդիւնաբերութեան գլխաւոր աղբիւրները։ Հասկանալի է, ուրեմն, որ քիւրտը կենսական ամենաանհրաժեշտ կարիքէն դրդուած՝ պիտի շարունակէ ապրիլ ուրիշի-թրքահպատակ քրիստոնեաների - ճակատի քրտինքով։

Փակագծի մէջ ասենք, որ վերջին Ռուս-Պարսկական պատերազմների ժամանակ կովկասեցի քիւրտերը մեծ աջակցութիւն ցոյց տուին Երևանի խաներին և սարդարներին ընդդէմ Ռուսաց։ Ինչու, ի՞նչ էր արել Ռուս կառավարութիւնը քիւրտերին, ոչինչ։ Բայց որովհետև երկիրը քաղաքակրթուած Ռուսաստանի ծեռքն անցնելուց յետոյ քիւրտը պիտի չ'կարողանար ապրել ալան-թալանով, այդ պատճառով «քիւրտերը մեծ հաճոյքով կօգնէին Պարսիկներին (որոնց տիրապետութեան տակ քիւրտը գահրիմանէր) ընդդէմ Ռուսաց»։ Ինչպէս որ երկիրը Ռուսներէն նուաճուելուց յետոյ՝ քրդերը գաղթեցին հարևան միւսլիման պետութեանց մէջ։

Առ հասարակ, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և վերոյիշեալ գիւղերում «քիւրտերը կը ներկայանան գոյութեան կռուում խիստ թոյլ տարր», ինչպէս իրաւամբ նկատել էր այդ արտասահմանեան մի Լրագիր։ «Քանի որ քիւրտի արդիւնաբերածներն են՝ կաթ, պանիր, միս, բուրդ, բրդի և մազի գործուածքներ։ Դրանցմէ զատ նրանք պէտք ունին՝ հացի, բրնձի, կտաւեղէնի, աղի, մրգերի, երկաթի, վառօդի և այլ կենսական պիտոյքների։ Որոնց ծեռք բերելու համար նա պիտի դի-

մէ օտարին։ Բայց ի՞նչ միջոցով պիտի դիմէ, երբ չունի զրամ կամ բաւականաչափ սեպհական մթերք։ Այդ միջոցի աղբիւրներն են, ինչպէս վերև նկատեցինք, աւարառութիւնը, կողոպուտը, սպանութիւնը և գերեվաճառութիւնը։ Դրանք դարերի ընթացքում դարձել են քրդական արդիւնաբերութեան բնական մասերը»։

Իմ կեանքի մէջ երկար տարիներ անցկացրած լինելով քիւրտ ցեղերի մէջ՝ ես համոզուած եմ, որ ընդ դմին քիւրտը մի կոյր գործիք է Օսմանցիի ձեռքում և վերջնի ապիրատ քաղաքականութեան տարաբաղդ զոհերէ մին էլ հէնց ինքն է...

Բայց հեռացանք մեր պատմութենէն։ Դառնանք Ղամիշլուք։

Վերև յիշած գիւղերէն վերջնի ցեղապետ վատահամբաւ Զէյնէլ Աղան[1], որ ժառանգական թշնամութիւն ունէր Սլիի ցեղին դէմ, երբ իմացաւ՝ վերջինս կուզէ տիրանալ Մարտոյի աղջկան-որին ինքը մտադրուել էր առևանգել, - լուր ղրկեց Մարտոյի հօրը, որ գեղեցիկ Թուրվանտան ձեռքէ չ՝հանէ և մանաւանդ «Սլիին չ՝կերցնէ»։

— Դուք դիտէք — կ՝ասէր Զէյնէլ աղայի կողմէն եկած պատգամաբերը, — որ Զէյնէլ և Սլի աղաները միմեանց արիւնը խմեն՝ չեն կշտանար։ Դիտէք նոյնպէս, որ մեր ցեղապետը, Զէյնէլ աղան, պատրաստակ կը փնտռէ Սլիի ցեղը ջարդելու համար։ Արդ՝ եթէ դուք, հակառակ մեր ցեղապետի այս հանդիսաւոր ազդարարութեան, կը համաձայնիք ձեր գեղեցիկ աղջիկը տալ

1. Սա այն Զէյնէլ աղան է. որ XIX դարի

սկզբում իր հրոսախմբերով ասպատակեց Քղիի (Կեղի)—Աստղ-Բերդ, Օձուն (Օձնակ), Թամրան և այլ հայ գիւղերը ու հարիւրաւոր տղաք ու աղջիկներ գերեց և վաճառեց Կարինում։

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ։

Ալիին կնութեան։ Ապա գիտցած եղէք, որ դիտակցաբար առիթ կը տաք երկու արիւնաժարաւ ցեղերի զարհուրելի ընդհարման։ Որի ժամանակ թէ՛ ձեր և թէ շրջակայքի բոլոր հայաբնակ գիւղերը կ՚երթան ոտքի տակ...

Հասկանալի է, չէ՞, ընթերցող. որ այդ դրութեան մէջ գտնուող Ղամիշլուքցիք անկաթող պիտի լինէին երկու ծայրահեղ կողմերի միջև պահպանել խաղաղ դրութիւն։

Պէտք էր այնպիսի դիրք բռնել, որ միաժամանակ երկու ցեղապետներին էլ հաճելի լինէր։ Բայց ինչպէս?...

V

Մայիսեան մի հրաշալի երեկոյ էր։

Ղամիշլուքի հարաւային կողմը գտնուող, 7-8 վերստ հեռ., Հաւաւ կամ Հապապան գիւղէն[1] դէպի Ղամիշլուք կը

1. Հաւաւ ըստ հայաբնակ գիւղի ժողովուրդը սկզբէն իվեր եղել է ուսումնա-

դիմէին երեք ծիաւորներ։ Սորանցմէ մին հաղիւ 35 տարեկան վայելչակազմ մի տղամարդ էր, որ տեղական դիմացկուն կտորէ շինուած հագուստներին վրայ կը կրէր մի գեղեցիկ շեշխան[1] հրացան, մի կայծոստ տրճանակ[2] և մի կեռ դաշոյն։ Ձախ կողքէն կախ էր ինկած և կաշեայ մի տոպրակ, որի մէջ՝ առանձին բաժանմունքներում՝ զետեղուած էին բաւականաչափ վառօդ և գնդակ։ Իսկ ձեռքին բռնել էր երկար նիզակը։

սէր, պարտաճանաչ և ինքնապաշտպան։ Այդ առթիւ ընդարձակ պիտի գրեմ մի ուրիշ գործում։

1. Ոչ բամբուշտաձիգ հրացանների մէջ ամենալաւը կըսեպուին այդ կողմերում շեշխան կոչուող պտուտակաւոր, երկարափող հրացանները։

2. Զագմագլի-գարապինա-տապանջա, որ իր ձևով շատ կը նմանի զինուորական փողի (պօռու) և կ՚արձակուի բռունին վրայ ամրացած հրահանի և գայլախաղի միմեանց ընդհարելուց։

Նրա երկու ճանապահորդակից ընկերները ծերեր էին, և նայելով նոցա գլուխներէն գատ ամբողջ մարմիններեր ծածկող սև ծիւպէներին[1] կը հասկացուէր, որ հոգևորականներ էին։

Երբ Հաւաւու կալատեղերէն դուրս եկան երեք ձիաւորները՝ ձիերն ասպանդակեցին և քառատրոփ առաջ սլացան։

Զանցած մէկ ժամ՝ հասան նոքա Ղամիշլուք և դիմեցին Վարդանեանի տունը, որ գիւղի հիւսիսային ծայրումը անդնդախոր ձորի վերև, ահարկու մի ժայռի վրայ կրկրդած էր մեն-մենակ։

Նորեկների ժամանելու լուրը կայծակի արագութեամբ տարածուեց ամբողջ գիւղում։ Ամեն կողմերէ սկսեցին մարդիկ հաւաքուել՝ գիւղի կենդրոնումը գտնուող հրապարակին վրայ։ Մխուր-արտում կը նստոտէին թափթփած յարդերին վրայ և իրենց կեանքէն ծանծրացած, կարծես մի սև օրուան կը սպասէին...

— Լսե՞լ էք, տղերք,—կ'ասէր Նրանցմէ մին, — Սրբազանի, Տէր Կարապետի և Ղաւազ Էլոյի[1] մեզ մօտ գալուն գլխաւոր պատճառը մի «մեծ նորութիւն» է...

Ի՞նչպէս, ինչպէ՞ս.... — հետաքրքրուեցան չորս կողմէն։

— Սրբազանը լսել է, որ շուտով կռիւ պիտի ծագի Քար-Օրցոց և Քրքմրցոց միջև։ Սրբազանը կուզէ իմանալ, թէ ի՞նչ միջոցներ ձեռք առնելու է որ հայ գիւղացիք ոտքի տակ չերթան...

— Ի՞նչ կը կարծէք, — մէջ մտաւ մի ուրիշը, ի՞նչ միջոցներ ձեռք առնելու է։

— «Հոմա զանի՛ ավգ քանճարա շէօնի» — վճռեց մի ծերուկ։

1. Վերարկու։

1. Ղաւազ — բարձրաստիճան պաշտօնեաների (հոգևորական, հիւպատոս ևն) զինակիր սպասաւոր, որ կ'առաջնորդեն իրենց տիրոջը՝ մի տեղ գնալիս։

Դա Զազա-Ծրմրլի[1] քրդերէն լեզուին մի խորիմաստ դարձուածքն է, որ չէ կարելի բառացի թարգմանութեամբ — «Աստուած գիտէ՝ ջուրն ուրկէց կերթայ» — միտքն ըմբռնել։ Բայց կարելի է բացատրել, ձևակերպել այսպէս։ — Բնութեան մէջ ամեն բան ունի որոշ ու ներդաշնակ ուղղութիւն-ընթացք, որին հպատակեցնել մեր կամքին-չէ կարելի, ինչ որ պիտի լինէր՝ կը լինի։ Այլապէս, կը նշանակէր, որ աւելորդ էր միջոցների վրայ մտածել, որովհետև «երբ մարդը կը ծնի՝ Աստուած անոր ճակատին վրայ կը գրէ անոր գլխին գալիքները...»

Դեռ մինչև այսօր էլ, շատ տեղերի հայոց նման, բալուցին համոզուած է, որ և ոչ մի կերպ չէ կարելի փոխել ճակատագիրը։

---

1. Ամբողջ քրդերը իրենց լեզուով երկու կարգի կըբաժանուին՝ զազա-տրմրլի և կըրմանճ։

Եւ այդպէս մտածելով՝ Ղամիշլուքցիք կը թուլացնէին իրենց բաղուկները և անփոյթ կերպով կը հպատակէին մարդոց ձեռքով պատրաստուած արհաւիրքներին։

— Հօմա զաննի՝ ավգ քանձարա շէօնի. — կրկնեցին միւսները։ Եւ նախկին տրամադրութեամբ զիմեցին Վարդանեանների տունը։ Որպէս զի տեսնեն՝ ինչ կերպ կըմրտածեն «մեծաւորները»։

VI.

Զնայած որ, առհասարակ, Ղամիշլուքցոց բնակարաններն իրենց կազմութեամբ շատ չէին զանազանուէր կենդանիների որջերէն, սակայն ուրիշ գիւղերի նման Ղամիշլուքումն էլ յատկապէս պատուաւոր հիւրերի համար կային 1-2 կանոնաւոր «օտաներ», որոնցմէ մին Վարդանեանների տանը կից էր և ուր այդ օր ընդունուել էին երեք հիւրերը։

Քառակուսի մի միջակ սենեակ էր այդ,

լուսառատ և բաւական մաքուր։ Ճակատի և կողքերի պատերին առջև մի թղաչափ բարձրութեամբ սէտիրներ էին շինուած, որոնց վրայ փռել էին ներքնոցներ և գորգեր։

Օճաղի աջ կողմում նստած էր Բալուի առաջնորդ Սրբազանը. նրա դէմ նստել էր Հաւաւու աւագ քահանայ Կարապետ Տէրոյեանը։ Առաջնորդին կողքին բազմել էր տան նահապետը՝ իր աջ կողմն ունենալով առաջնորդի զաւագին, որը նիզակէն ու հրացանէն զատ բոլոր զէնքերը վրան կը կրէր։

Այնուհետև ծնրաչոք շարուած էին 30-ի չափ Ղամիշլուքցի ծերունիներ. այդչափ էլ երիտասարդներ ձեռնամած և ամենայն երկիւղածութեամբ կանգնած էին պատերին առջև և դրան կողքերին։

— Զին ու ջորին կուեցան՝ էշը դնաց ոտքի տակ։

Այդ առածով սկսեց առաջնորդ Սրբազանն իր խօսքը։

— Այո՛, շարունակեց նա, — անհոգ, հեզգ էշը դատապարտուած է ոտնահարութեան։ Այդպէս են և այն մարդիկ, որոնք չեն հասկանար ինքնապաշտպանութեան նշանակութիւնը և ազատ կեանքի իսկական արժէքը։ Նա ով անտարբեր կը մնայ դէպ իր շուրջը կատարուածները։ Նա ով լոկ դիւանագիտութեան մէջ երկնքի մատը կը փնտռէ։ Նա ով իր մարմնի մէջ խրուած փուշը իր ձեռքով հանելուն վրայ չմտածեր....—այդպիսին իրաւունք չունի ինքգինքը որ և է լաւ բանի տէր սեպելու։

Լռեց Սրբազանը և սկսեց տրորել իր փառահեղ մօրուքը։

— Մենք, Բալուցի հայերս, — ասաց Տէրոյեանը. — մի շատ գեղեցիկ խօսք ունինք. «Հարկն օրէնքը կը պահպանէ»։ Որ կը նշանակէ, թէ կը լինին միջոցներ, երբ մարդ պէտք է որոշ ժամանակով աչքաթող անէ իր ընտրած այս կամ այն ուղղութիւնը և հակառակ դրան՝ մի այլ ուղղութիւն ձեռք առնէ։ Ուրիշ խօսքով

պէտք է ճանչնալ ժամանակակից դարի հոգին և նրա պահանջներին համապատասխան ուղղութեան հետևել։ Շնորհիւ այդ հանդամանքի մենք, քրիստոնեայ հայերս, պէտք է ներկայ պայմաններում աչքաթող անենք մահացնող համբերատարութիւնը և չարին բարով պատասխանելու սկզբունքը, և մի բոպէ աչքի առաջ ունենանք ասնելի Մովսէսի պատուէրները...

— «Ակն ընդ ական և ատամն ընդ ատամն», — նկատեց Սրբազանը բոպէական լռութիւնն ընդհատելով։ Տէրոյեանը շարունակեց. — Այո՛։ Հենց նրանումն է մեր յետամնացութեան պատճառը, որ «Զարին պէլան Աստուած կուտայ» ասելով՝ կարծել ենք, թէ «բարութիւն» ասելը կը նշանակէ դատապարտել ստրկական լռութեան։ Եւ այդ դրութիւնը, դժբաղդաբար, կարծես, հայերիս միսն ու ոսկորն է դարձել..... Կը դայ մի օր, երբ մենք կը քաղենք մեր անհեռատեսութեան դառնագոյն պտուղները։ Կը դայ մի օր, երբ կը հիասթափւինք և կափսոսանք, որ ինչո՞ւ իր ժամանակին չ՝կարողացանք ճանչնալ մեր մարդկային իրաւունքները։ Որ այդպիսով ապագան ղերոյի համարժէք մի բան արինք.... Բայց այն ատեն արդէն ուշ կը լինի.... Երկաթը պէտք է տաք-տաք ծեծել։

— Ի՞նչպէս անելու է հապա ձեր կարծիքով, որ լաւ լինի, — հարցրեց Մելիքխաչն, որ մինչև այդ ժամանակ ուշի ուշով կը լսէր զրուցուածները։

— Ինչպէս անելո՞ւ է, պատասխանեց Սրբազանը. — ահա թէ ինչպէս։ Պիտի սովորիս հանդամանքներէն օգուտ քաղել և ներկայացող մէն մի առիթ ձեռքէ չփախցնել։ Եթէ այսօր քիւրտը, օրինակ, կը ձգտի մահացնել քեզ բարոյապէս, հոգեպէս, անիրաւաբար տիրել քու ստացուածքին, ոանատակ տալ քու պատիւը ևն։ — Դու էլ մարդ ես, ցոյց տուր, որ գիտես՝ քեզ նման 5 զգայարանքի տէր

անիրաւին դիմադրաւել և քու պատիւը պաշտպանել, քու իրաւունքդ։ Ուրիշ-ոչինչ։

— Ս. Աջիդ մեռնիմ, Սրբազան, պատասխանեց Մելիքը՝ միքիչ վրդովւած, մի բարկանար, որ ասեմ, թէ այդ խօսքերն արտասանելը շատ դիւրին է. բայց գործնական կեանքում չիրականանալիք բաներ են։ Ըստ որում մեր աչքը բացինք մենք և այսպէս տեսանք, ինչպէս որ կայ։ Հիմա ելնել և մեր պապերէն ժառանգած համբերատարութիւնը ջուրը ձգել՝ առանց հակառակ ուղղութեան բարեյաջող ելքին վրայ վստահիլ կարողանալու։ Այդ մի և նոյնը կը լինէր, եթէ ասէինք 5 դահեկան ունեցողին, թէ «5 դահեկանը շատ աննշան մի գումար է։ Սրի՛, այդ գումարը ծեռքէ հանի. և աշխատիր, որ մեծամեծ գումարների տիրանաս»։ Հապա եթէ այդ խեղճը անսայ մեզ և մեծ գումարին չ՚տիրանալէ զատ իր ունեցած 5 դահեկանն էլ վրայ տայ, ինչ վատաւած

կը լինի։ Աւելի լաւ չէ՞, որ ունեցած քչովը բաւականանայ, երևափայական գումարին վրայ յոյս չիդնէ, մինչև որ մի օր Աստուած մի դուռ բանայ...

Ղաւաղը, յանկարծ, մի քրքիչ արձակեց և լեղուն կծեց...

— Սիրելի Մելիք, — ասաց Սրբազանը հանդարտութեամբ, — մեր ասածները չիրականանալիք բաներ չեն՝ եթէ մենք փորձենք մեր համախմբած ուժերով գործ տեսնել։ Իրաւ է՝ թէ մեր պապերը մեզ կտակեցին մի տաժանելի կեանք։ Բայց այդ չինշանակէր, թէ այն ամենը՝ ինչ որ պապենական ժառանգութիւն է պէտք է ամուր ընդդրկենք։ — Ոչ։ Մի բան կարող է օտար լինել՝ բայց գեղեցիկ, — մենք պարտաւոր ենք իւրացնել այդ բանը։ Միւս կողմէն այս կամ այն բանը, որ մեր պապերն են մեզ կտակել, կարող է մեր արդի կեանքին ու մեր ժամանակի պահանջներին անհամապատասխան լինել։ — Այդպիսիներին էլ պէտք է արհամար-

հենք ու բաց ձգենք մեր մէջէն... Եթէ քու պապը ցորեն չունենալով կըլկըլ հաց կուտէր միթէ՞ դու այսօր քու ցորենի լոյսի նման հացը պիտի թողնես, և լոկ պապուտ նմանելու համար, կըլկը՞լ պիտի կրծես...։ Պէտք է գիտենանք մենք, սիրելի Մելիք, որ ժամանակին հետ կը փոխուին և մարդկային ու ազգային կեանքի պայմանները։ Պէտք է ժամանակին հետ առաջ գնալ, յետ մնացողը կը տուժէ...

Սմենքը լարուած ուշադրութեամբ կը լսէին Սրբազանին։

— Դու մեզ նմանեցրիր, — շարունակեց նա, — քու բերած օրինակում, 5 դահեկանի տիրոջը։ Բայց եթէ մի բոպէ աչքի առաջ ունենաս ժամանակակից Թրքահայի կամ քրդահայի կեանքը՝ պիտի զգաս, որ հայն այժմ Թուրքիայում կամ Քիւրտիստանում, համարեա՝ թէ ոչինչ չունի.., եթէ հայը մտածել սկսի մի գեղեցիկ օրուայ վրայ և չի յաջողի՝ ոչնչութեան մէջէն կորցրածը պէտք է լինի — ոչինչ.. Հապա եթէ յաջողի «մի բան» դուրս բերել՝ գիտե՞ս որքան թանգ կ'արժէ այդ բանը....

— Ներողութիւն — ընդմիջեց Մելիքխաչն, — Ինչպէ՞ս թէ հայը ոչինչ չունի։ Հայն ունի իր հայրերի Սուրբ Հաւատքը. ունի շատ թէ քիչ՝ իր ընտանեաց պարէնն հայթհայթող Վարելահողը. ունի իր Պատիւը, որով նա հաղարապատիկ և բիւրապատիկ բարձր է իր հայրենակից քիւրտէն ու Թուրքէն։ Հայն ունի Աստուծմէն շնորհուած (բնատուր) ընդունակութիւն՝ զոյութեան կռուում ամօթով չիմնալու...։ Հային կը պակասի, իրաւ է, շատ բան։ Բայց ինչ արած, երբ Օսմանցուի երկրում մեր ունեցածէն աւելին հաղիւ թէ կարողանար ձեռք բերել որ և է քրիստոնեայ հպատակ...

Այլ ևս անկարող լինելով զսպել իր ծայրահեղ զարմանքն ու զայրոյթն Մելիքի խօսքերին դէմ՝ Ղաւազ Էլօն խօսե-

լու թոյլատուութիւն խնդրեց Սրբազանէն և յուզուած ձայնով բացականչեց.

— Օհ՜... եթէ ճշմարիտ է Մելիք աղայի ասածը. եթէ, իրօք, հայը տէր է նորա թուած բաներին. — ապա ելէ՛ք, հայեր, և կլոր շրջան կազմելով՝ սկսեցէք պարել...: Կեցցէ՜ թրքահայը և քրտահայը. որ ունի Ս. հաւատք: — թէև այդ հաւատքին օրն հազար անգամ կը քֆրէ մահմէտականը մեր ականջներին տակ... Կեցցէ՜ հայը, որ ունի իր պարէնն արտադրող հող, — թէև այդ ներկած է հայ մարդու արիւնով և նորա տուած արդիւնքով մեր հոգեհանների ամպարները կը լիքանան... Կեցցէ՜, կ'ասեմ, հայը, որ ունի պատիւ, — թէև հողին հաւասարած և ցեխով պատած... Կեցցէ՜ հայն, այո՛, որ ունի ընդունակութիւն... իր անտանելի զոյութիւնը քաշ տալու՝ որպէս նորա, որպէս սարուկ, որպէս լծկան տաւար... Այլ ևս ի՞նչ հոգ, որ հային կրպակասի լեզու - ազգերի ա-

մենանուիրական սրբութիւնների աւադագոյնը, — և նա այսօր կը խօսի՝ իր Ազգի, Կրօնի և Հայրենեաց թշնամու լեզուն՝ քրդերէն կամ թուրքերէն...: Էլ ի՞նչ հոգ, որ հայը չունի Դպրոց, ուր պիտի մարդ դառնար նորա մատաղ սերունդը և ապագային ազնիւ քաղաքացի իր Ազգին, իր Հայրենիքին, Պետութեանը պիտանի արարած դուրս գար: Հա՛ դու էլ, Դպրոցն էլ բա՜ն է, որ նորա չգոյութիւնն պիտի վրդովէր մեր հանդիսար...: Էլ ի՞նչ հոգ, որ մեզ կը գլանան մեր մարդկային իրաւունքները: Ի՞նչ հոգ, կ'ասեմ, որ մեզ կը պակասի մարդավայել կեանք: Կեանքը - կեանք է: Զէ՞ որ մի օր պիտի մեռնինք. բարեբաստ կեանքը խօ մեզ Գերեզմանի դռնէն յետ չիդրկեր, — թէև առանց այդ Կեանքին հաղիւ թէ «մարդ» կոչուող էակը չորքոտանի էակներէն կարելի լինի զանազանել...: Զէ, թողէ՛ք մեզ, Աստուծոյ խաթեր: Մի վրդովէք մեր սարկական նիրհը: Մի դպչիք մեր աս-

տուաժացրած լաւատեսութեան... Բայց եթէ կ'ուզէք մի բան անել, ապա խնդաս փակեցէք մեր կիսախուփ աչքերը, որպէս զի չտեսնենք այն մօտալուտ փոթորիկը, որ կը սպառնայ մեր գոյութեանը...

Մելիքխտոն գլուխը կախեց առջևն և սկսեց մտածել: Նա կը տեսնէր, որ խօսքով չպիտի կարողանայ գլուխ ելնել դրանց, մանաւանդ Դաւազ Էլօին հետ, որի մտրակող լեզուն երբ և իցէ խնայած չէր իր հարուածը, բոլոր նրանց դէմ, որոնք թագնուելով Պահպանողական անուան ետև՝ կամ չիտեսնել կը ձևացնէին իրենց շրջապատող թանձր խաւարը և կամ իրօք անզգայացած էին և իրենց մարդկութիւնն ուրացած.

Բայց Մելիքխտոն երկար խորհելով՝ վճռեց՝ տեղի չտալ այդ անկոչ հիւրերի քարոզութիւններին, այլ իր գիտցածին պէս գործ տեսնել: Եւ նա վստահ էր, որ և ոչ մէկը իր նման «հեռուն չէր տեսներ»:

VII.

Ընթերցողի այն հարցին, թէ ինչու Ղամիշլուբի ժողովրդի մէջէն մասնակցողներ չկային վիճաբանութեանը՝ պիտի պատասխանեմ, թէ այդ տեղ համայնքը ծայն չունէր: Ինչպէս քրդերի՝ նոյնպէս և հայ գիւղերի անբողջ ցեղի կամ համայնքի կամքը կարտայայտուէր մի անհատի — ցեղապետի կամ մելիքի — հայեցողութեամբ: Այդ երկու տարրերը — Հայ և Քիւրտ, — դարերի ընթացքում մօտիկ շփման մէջ լինելով միմեանց հետ՝ փոխադարձաբար ազդել էին իրար վրայ: Քրդական ազդեցութիւններէն մէկնել պիտի սեպենք այդ երևոյթը, որ գիւղական մի ամբողջ հայ համայնքի մէջ կ'իշխէր «կրաւորական համաձայնութիւն և սպասողականութեան դրութիւն»: Եւ շնորհիւ այդ հանգա-

մանքի հայ մելիքները կը հանդիսանային գլխաւոր դերակատար կեանքում։

Ճիշտ այդպէս էլ էր Ղամիշլուքում։ Գուցէ կային մարդիկ (մինչև անդամ գիւղացոց կէսը), որոնց հաճելի լինէր հիւրերի քարոզը։ Բայց այդ զգացմունքը արտայայտելու համար քաղաքացիական համարձակութիւն էր հարկաւոր, որմէն զուրկ էին այդ ողորմելիքը։ Ըստ որում ազդուած լինելով քրդերէն, նոքա ի նկատի ունէին քրդական կեանքը նմանօրինակ դէպքերում, որ անհատական նախաձեռնութիւնը բառի բուն նշանակութեամբ կաշկանդուած էր և անհատի ծայնը փոքրամը խլացած...

Ուրեմն Մելիքի ընդունածը՝ գիւղի ընդունածն էր. մերժածը՝ մերժած։

Այդ մի մեծ դժբաղդութիւն էր Ղամիշլուքի համար։ Որովհետև եթէ այդ գիւղի համայնքի պատմական կեանքը չանդրադառնար՝ լաւագոյն ապագային դիմելու ոչ մի բարեացակամութիւն չցայտնող Մելիքխաչին մէջ։ — Այդ դէպքում գուցէ գիւղացիք նպատակայարմար դատէին Սրբազանի և ընկերների առաջարկութիւնները և սկսէին մտածել մարդավայել կեանքի վրայ։

VIII.

Մինչև ուշ ժամանակ, կէս-գիշեր անց, նստած էին հիւրերն ու Մելիքխաչն։ Ունկնդիր ծերունիներէն մի քանիսը նրստած տեղերը կը մրափէին։ Մնացեալներէն մաս մի գնացին տները, մի մասն էլ թէև աչքը բաց՝ կը տեսնէր հիւրերին, բայց բարոյական խլութեան պատճառով չէր կարող լսել՝ իր կեանքի բարօրութեան համար զրուցուած մարգարիտ խօսքերը...

Մելիքն ու հիւրերը թէև շատ վիճեցին, բայց երկու կողմէն և ոչ մին չ'զիջեց միւսին։ Կարելի էր մի կերպ ասել,

որ Մելիքը յաղթող դուրս եկաւ։ Ի հարկէ, այդ յաղթանակը կանոնաւոր մրցումի արդիւնք չէր, հապա ծայրահեղ յամառութեան։

Հիւրերը տեսնելով, որ չէ կարելի, ոչ մի կերպով յեղաշրջել յամառ Մելիքի համոզմունքը՝ «ձեր արիւնը՝ ձեր գլուխը» ասին և լուսաբային ձեռնունայն, հիասթափուած վերադարձան, Հաւաւ գիւղը։

Ժողովրդի այն մասը, որ գիշերը ի ներքուստ համակարծիք էր հիւրերի յայտնած մտքերին՝ երբ տեսան, որ Մելիքն յաղթող դուրս եկաւ, խսկոյն փոխեցին իրենց դիրքը։

— Երևի, Մելիքի պաշտպանած հայեցակէտը հիմնաւոր էր աւելի, որ հիւրերը տեղի տուին և հեռացան։ — Այսպէս կրմտածէր ոչխարացած Ղամիշլուքցին և երջանիկ կրհամարէր իրեն, որ Մելիքխաչի նման պետ ունի։ Միամիտ մարդիկ...

IX.

Ղամիշլուքի վերևում, Հայաստանի մշտածիծաղ կապոյտ երկնակամարին վրայ երևան եկան մօտալուտ փոթորիկ դուշակող սև-սև ամպեր և սկսեցին հետզհետէ խտանալ...։

Դրանց չնկատելու համար պէտք է մարդ կոյր լինէր։

Բայց Ղամիշլուքցի հայը, փորձով իմացած լինելով հանդերձ, որ այդպիսի փոթորիկներն առանց աղետալի հետք թողնելու չեն անցնիր հայի գլխէն, — այնու ամենայնիւ հարկ չէր զգար պատրաստ գտնուելու, որ քաջութեամբ դիմաւորէր ահռելի փոթորկին...

Թուրվանտան արդէն Ալի աղայի հարեմումն էր... Այդ առևանգումը տեղի ունեցաւ հիւրերի մեկնելէն հինգ օր յետոյ։

— Դէշ բան էր՝ եղաւ, — կրմտածէին

Ղամիշլուքցիք՝ ակնարկելով Թուրվանտայի առևանդումը, — բայց եղածը եղաւ—անցաւ. Է՛, ի՞նչ անենք, Աստուած այդպէս էր գրել նորա ճակատին և... այդպէս էլ եղաւ։

Հիմա բանը նրանումն էր, որ պէտք էր ուտեստի պաշար մատակարարէին նախայարձակ եղող ցեղի կուռղներին։ Որովհետև Ղամիշլուքը կիյնար Քար-Օր և Քուրմ գիւղերի մէջև, ու վրայ գնացող ցեղը, որ մէկն էլ որ լինէր, պիտի անցնէր Ղամիշլուքի քովէն, այդ պատճառով յարձակողին ուտելիքը պիտի մատակարարէին Ղամիշլուքցի հայերը։ Այդպէս էր առհասարակ քրդերի «օրէնքը»։

Եթէ երբէք հայ գիւղացիք ընդդէմ գնային այդ օրէնքին, վա՜յ նոցա դլխին... այնուհետև խօ դլուխը խալսելը հրաշք կը լինէր...։ Ասենք հայ գիւղացիք այդքան էլ «անխելք» չէին, որ այդ «հնաւանդ պարտականութիւնը» չ՛կատարէին։ Միայն հաւաւ գիւղն էր, որ «համրած էր

քրդերի ակռաներն ու չ՛տալը սովորութիւն դարձրած»։

Հաւաւցիք էլ խօ այնքան դի-բութեամբ չ՛պիրացան «չ՛տալու սովորութեան»։ Զէ՞ որ Կէօկտէրէի մեացեալ քիւրտ ցեղերը Ուզուն-Օվացոց վրայ գնալիս, երբ Զին—Աղն[1] և Հաւաւ գիւղերէն 2 շաբթուան պաշար խնդրեցին և մերժում ստացան՝ կռիւ ծագեցաւ դաշնակից քրդերի և յիշեալ երկու գիւղերի հայոց մէջ։ Այդ աղէտալի բայց և փրկարար ընդհարման միջոցին, որ տեղի ունեցաւ 1803 թ. դարնան, Զին—Աղնի և Հաւաւու հայերը թէև մեծ արիութիւն ցոյց տուին, բայց դարձեալ մինչև որ մի քանի տասնեակ զոհեր չիտուին՝ չիհասան իրենց նպատակին...։ Ինչ էլ լինի՝ նրանք հաւաւցի

1. Զին-Աղն՝ ըստ Գ. Վ. Սրուանձտեանի, իսկ ըստ բալուցոց-Շնաղ, որ Հաւաւին մօտիկ մի գիւղ է զուտ հայաբնակ։ Այդ գիւղի հայերն էլ հաւաւցիներին կը նմանին մի բիչ։

են, կը վայլեցնեն։ Նրանք մի անգամ ջուրն առուն ծգել են....

Այդպէս կը մտածէին Ղամիշլուքցիները և կ'աւելացնէին,

— Մենք դեռ մի այդպիսի բան արած չենք և անելու էլ չենք, որովհետև հաւաւցիների բանն ուրիշ է, նրանք քաջ մարդիկ են, Աստուած նրանց քաջութիւն է տուած...

X.

Փոթորիկը պայթեցաւ...

Երկու արիւնախանձ ցեղերի մի շաբաթ տևող ահռելի ճակատամարտի ընթացքում, որ տեղի ունեցաւ Մրջիւնիկ և Սադրաթ հայաբնակ գիւղերի միջև ինկնող դաշտավայրում, — քրդերի կողմէն աւարառութեան ենթարկուեցան հետևեալ հայ գիւղերը. — Գմբէթ, Սպարանք։ Նբխրի, Նբպշի, Սղամ, Զէթ, Ղամիշլուք, Արդիխան, Մէղրէ,

Մրջիւնիկ, Նոր-Շնակ և Սադրաթ։

Կռիւը վերջացաւ Քար-Օրցոց ամենախայտառակ պարտութիւնով և Զէյնէլ աղայի ու երկու որդոց սպանելովը։

Եւ չինայած, որ վերոյիշեալ գիւղերի հայերը ոչ մի մասնակցութիւն չունեցան բուն պատերազմական գործողութեանց մէջ՝ դարձեալ 12 գիւղերէն մօտ 200 հոգի կոտորուեցան։ Դրանցմէ ոմանք սպանուեցան իրենց տան մէջ՝ աւարառութեան միջոցին, ոմանք զանազան մթերներ պատերազմի դաշտը փոխադրելիս — հակառակորդ ցեղի հրոսախմբերին հանդիպելով։ Մի աչքի ընկնող մաս էլ Զէթ գիւղում սպանուեցան, որովհետև Զիթացիք աւարառութեան միջոցին ընդդիմացան Քար-Օրցոց...

Սպանուածների թւումն էին ի միջի այլոց և Մելիքխաչն ու երեք որդիքը (Մարտոն ապաստանած էր իր աղջկայ մօտ՝ Սլի աղայի տունը)։

Մելիքին ու գերդաստանին սրի անցնելու համար Զէյնէլ աղան յատկապէս մի խումբ էր զրկած Ղամիշլուք։ «Այդ խումբը չ՚բաւականացաւ իրեն տրուած հրամանով, խրժդժելի արարքներով քարուքանդ արին Ղամիշլուքը՝ աւերակների տակ թաղելով տասնեակ զոհեր։ Երկու սեռի պատանիներին էլ գերի տարին Քար-Օր, ուր այդ խեղճերը մնացին 1-2 շաբաթ։ Զէյնէլ աղայի սպանուելէն յետոյ՝ Դոզրբցոց շէխի կարգադրութեամբ գերիներին տարին Բերիա — Հալէպ քաղաքը և լաւ գնով ծախեցին Պասրացիներին...»։

XI.

Կը զուշակեմ, որ ընթերցողը կը մտածէ, թէ ի՞նչ կ՚անէր Թուրքը։

Այդ պատճառով էլ կ՚շտապիմ ասել մէկ-երկու խօսք։

Թուրք կառավարութիւնը շատ լաւ

գիտէր Քար-Օրցոց և Քրմբցոց մէջ տիրող խռովութեանց նախնական շարժառիթները։ Գիտէր նոյնպէս, որ քաղաքէն հաղիւ 2-3 մղոն հեռաւորութեան վրայ երկու ցեղերը կը ճակատամարտին։ Չէր կարող չ՚գիտենալ, որ շնորհիւ այդ կռուի մօտակայ հայաբնակ գիւղերը ենթակայ են աւար-աւերի և սպանութեանց։ — Գիտէր, այո, բայց հարկ չէր զգար միջամտելու և աղդաբնակութեան մէջ խաղաղութիւն պահպանելու՝ վախենալով որ մի՛ դուցէ այդ քայլով այս կամ այն ցեղին անհաճոյ թուի։

— Ի՞նչ օգուտ, կը մտածէր Բալուի դաւառապետը, — եթէ մէջ մտնեմ, քրդերը գիտեն իրենց անելիքը, խօ իմ բերանս չեն նայելու։ Ես պիտի զուր տեղը դէշ մարդ լինիմ... Քրդերն այնպիսի մարդիկ են, որ եթէ իրենց օգուտը մտածելով՝ երկուստեր ձեռնտու պայմաններ առաջարկես՝ նոքա չեն հասկանար քեզ։ Մէկդի թողած իրենց մէջ տիրող

իրարանցումը՝ կը միանան, ու քեզ կը զարնեն...: Ուրեմն չ՝արժէ նոցա գործերին խառնուել: Ամեն ինչ վերջացնելուց յետոյ կարելի է յաղթողին հետ բարեկամանալ և լաւ մարդ դառնալ...

Ահա այդ պատճառով բոլոր գաղտնութեանց առջև սուտ-խուլ ձևանալով՝ այժմ միայն, «ամեն բան վերջանալուց յետոյ», գաւառապետն հարկ կը զգար բարեկամանալ յաղթող Ալիին հետ և «լաւ մարդ դառնալ»...

Թուրք կառավարութեան գաւառական ներկայացուցիչները.— Մենք անզօր ենք — կ՝արդարացնէին իրանց,— պատերազմասէր քիւրտ ցեղերի (Աշիրաթ) հաւաքական ուժին դէմ: Մենք չենք կարող զսպել նոցա անյագ կրքերը և խաղաղութիւն պահպանել մեր պետութեան հիւսիս-արևելեան նահանգներում: Ֆէօտալականութիւնը այդ նահանգների ճակատագիրն է, որ չէ կարող ջնջուել Օսմանցիի ձեռքով...:

— Մի բան սակայն շատ լաւ է, կաւելացնէին նոքա,— որ քրդերն ինքնաբերաբար կը նպաստեն մեր ալլահախնամ Պետութեան կազմած մի մեծ ծրագրի իրագործմանը: Առանց մեզ նեղութիւն ու հոգ պատճառելու.— զբաղեցնել ըմբոստ տարրերին, որ ժամանակ չունենան մեզ[1] դէմ յոխորտալու:

Բացի այդ՝ նրանք կը մոռանային որոշակի շեշտել և այս կէտը, որ քրդական արարքները խիստ ծառայում միջոցներ էին Օսմանցուի ձեռքում՝ ոչ-իսլամ տարրերին ուժաթափ անելու, կեղեքելու, ազգային առանձնայատկութիւններէն զրկելու... համար:

***

Քրմքրցոց Ալի աղան այդ փառաւոր

---

1. Ընդհանուր թշնամուն

յաղթութիւնը տանելուց յետոյ, որով բոլորովին ընկճեց Քար-Օրցոց ցեղին, մի օր հրաւիրագիր ստացաւ Բալուի գաւառապետէն, որ քաղաք երթայ։ Ալի աղան պատասխանեց, որ առ այժմը չէ կարող ընդունել այդ հրաւէրը, որովհետև զեղեցիկ Զումբուլթ հանումը (Երբեմնի Թուրվանտան) շատ վտանգաւոր հիւանդ է։

Անարգ բարբարոսութեան անպարտ զոհը՝ չ՝կարողանալով հանդուրժել սոսկալի իրականութեան դէմ, մորմոքմամբ սրտի տեսնելով իր անարատ պատուի բռնաբարումը և փրկութեան ոչ մի ելք չ՝գտնելով... — մկնդեղով ինքզինքը թունաւորեց, որ «հոգին ու մարմինն ազատէ» բռնութեան անգութ ճիրաններէն... Խե՜ղճ աղջիկ...

Բայց, դժբաղդաբար ասեմ՝ թէ բարեբաղդաբար, Ալի աղան շուտով վերահասու եղաւ այդ դաղտնիքին։ Ոչ մի զոհողութեան առջև կանգ չառնելով՝ փրկեց

«իր որսերին մէջ ամենաթանկագին և իր կանանց մէջ ամենադեղեցիկ էակի» կեանքը։

XII.

Երբ կարելի էր վտանգն անցած համարել (Զումբուլթ հանումը լաւացել էր) Ալի աղան իր շքախմբով դիմեց Բալու քաղաքը։ Երբ հասան Մեսրովբեան Բերդի[1] արևմտեան ստորոտը և Բալուի Կախաղան (Տարաղաճ) կոչուող քաղաքամասէն անցնելով կը մտնէին «Ս. Աստուածածնի կենդրոնական փողոցը», — այդ փողոցի երկու կողմի հաղարաւոր խանութպանները ոտքի կ՝ելլէին և խորը

1. Բալու քաղաքը հաստատուած է մի բարձրաբերձ, հսկայ ժայռի հարաւային կրծքին վրայ։ Աւանդութիւնը կասէ, որ Ս. Մեսրովբը այդ բերդին (ժայռին) մէջ աղօթեց և հայկական տառերը գտաւ։ Այդ պատճառով կը կոչուի Մեսրովբեան Բերդ։

գլուխ կը տային Ալի աղային ու շրքախմբին.... Քաղաքում ամեն ոք գիտէր, որ քիչ ժամանակ առաջ Ալին յաղթել էր Քար-Օրցի «հերոսներին» և. ամենքը կը զգային, որ «յաղթողն» երկրի մեծն է, ամենամեծ մարդը, որի առջև պէտք էր կանգնիլ և գլուխ տալ...

Յաղթողի գնացքը կանգ առաւ կառավարչական շինութեան — խոնախին առջև, որ հաստատուած էր Ս. Սահակայ թաղում՝ դէպի Արածանի գետը նայող մի բարձրկէկ բլրի վրայ։

Գաւառապետը, ոստիկանապետը, երկու տասնեակ ժանտարմներ իրենց տասնապետներով, առաջնակարգ միւսլիմաններէն մի քանիսը՝ զուգուած-զարդարուած՝ — զիմաւորեցին յաղթող ցեղապետին։ Գաւառապետի տանը վաղօրօք մեծ պատրաստութիւն էր տեսնուած, որ կարելի եղածին չափ շքեղ ընդունելութիւն ցոյց տան։

Եւ որքան գոհ մնաց Ալի աղան այդ «սրտագին ընդունելութենէն»։

Միւս օրը Ալի աղան գաւառապետին ներկայացրեց երկու հայ դեղեցկուհիներ, որոնց նա «յափշտակել էր Սղամ գիւղէն՝ յատկապէս սիրելի գաւառապետին նուիրելու համար, որպէս մի զոյգ Ամասիայի քաղցրատեսիլ և անուշահամ խնձոր»...

XIII.

Այդ «խնձորների» փոխարէնը Ալի աղան երեք ամիս յետոյ ստացաւ լիուլի...

Գաւառապետի շնորհիւ կազմուած և Բարձրագոյն Դրան ներկայացրած մի բազմաստորագիր մազմանդային[1] դէմ Բալուում ստացուեց Կ. Պոլսէն մի ֆէրման[2]։ Այդ ֆէրմանի զօրութեամբ Քըրմըցոյ ցեղապետ Փափազ-օղլի Ալի աղան

1. Հանրագրութիւն։
2. Բարձրագոյն հրովարտակ։

և նորա ժառանգները, որդւոց որդի, Պէկի կոչումն կը ստանային։ Գաղանը վարձատրեցաւ։ — Նա այժմ կը կոչուէր Ալի Պէկ....

ՎԵՐՋ Ա. ՀԱՏՈՐԻ

ՔԻՒՐՏ ՊԷԿԻ

Նոր Բաժանորդներ [1])

(Դ. Հատորէն սկսած)

Տիկին Ե. Պէզճեան
» Մ. Միքայէլեան (10 բաժ.)
» Ֆէթֆաճեան
Օրիորդ Վ. Սառաֆեան
» Հ. Ոսկան (4 բաժ.)
» Հ. Թումանեան (10 բաժ.)
» Գայեանէ Սահաթճեան
Պարոն Անդրանիկ Էթմէքճեան
» Մ. Պոյաջեան
» Աբել Ժամկոչեան
» Մկրտիչ Աւետիսեան
» Արշակ Կուրզինեան
» Ռուբէն Սառաֆեան
» Գաբրիէլ Շրարեան (5 բաժ.
» Ռուբէն Ծատուրեան
» Ստեփան Յակոբեան
» Պետրոս Կարագէօզեան

1. Կը շարունակի բաժանորդագրութիւնը։

7/XI 1922

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քիւրտ Պէկ Բ. տպ.	15	կոպ.
Սրամբ (սակաւաթիւ)	30	»
Անասուածները (սակաւաթիւ)	40	»
Մերձեցում	20	»
Սև հարսանիք (պատկեր) . . .	8	»
Դատ (կրիտական անալիզ) . .	8	»

Պատրաստ են

Քրդերը Ծաճկաց-Հայաստանում.
Նաճարանի տէրը.
Ֆաթմայ.
Շէյխ Մահմուտ.
Բանաստեղծութիւններ.

ԳԻՆԸ 15 ԿՈՊԷԿ

Դիմել հեղինակին՝ Шводъ, Анапа.

ՀՀ Ազգային գրադարան
NL0313328

21496

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Քիւրտ Պէկ» (գծեր Հայ-Քրդական կեանքէն) Ա. Հատորիկ (սպառուած)	Ռ. Կ. —.—
Նոյնը. Բ. Հատորիկ, Արամը .	—.25
«Մերձեցում» (անուրջներ) . .	—.20

Շուտով լոյս կը տեսնեն «Քիւրտ Պէկի» Դ և Ե. հատորիկները։

«Սեւ հարսանիք» (և պատկեր տաճկահայոց իրական կեանքէն)։

Գինն 40 կոպէկ

Դիմել հեղինակին

Mardiross Chevodt, Anapa (Russie).

կամ М. Шводъ, Анапа (Россія).